

**ԱՆԱՊԱՏԻ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
ՌԷՆՉՕ ՄԻՐԱԺ, ԳԱԼԻՖՈՐՆԻԱ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ**

Ուրախութեամբ կը հաղորդենք, որ անցնող քանի մը ամիսներու ընթացքին զգալիօրէն կը յառաջդիմեն Անապատի Հայց. Եկեղեցւոյ կառուցման աշխատանքները: Եկեղեցւոյ արտաքին աշխատանքները աւարտած են եւ այժմ գործը կը շարունակուի ներքին մասին մէջ: Շուտով աշխատանքը պիտի սկսի Սուրբ Սեղանի կառուցման, Սուրբ Մկրտութեան Աւագանի, գլխաւոր դրան եւ մոմավառութեան բաժնի: Յառաջիկայ քանի մը շաբաթներու ընթացքին Ծխական Խորհուրդը պիտի ապսպրէ եկեղեցւոյ նստարանները:

Մասնաւոր ջանք կը տարուի յաւելեալ հանգանակութիւն կատարելու, որպէսզի պահանջուած կարգ մը աշխատանքները եւս աւարտին եւ պետական արտօնութիւն ստացուի եկեղեցւոյ գործածութեան համար: Անոնք որոնք կը փափաքին յիշատակ մը ունենալ եկեղեցւոյ մէջ, թող հաճին հեռաձայնել եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Գրիգոր Քհնյ. Չաքարեանին (818) 279-5437 թիւով: Հաւատացեալներուն առատաձեռն նուիրատուութիւններուն շնորհիւ կարելի պիտի դառնայ եկեղեցւոյ ներքնամասին ամբողջացումը, որպէսզի պատրաստ ըլլայ Նաւակատիքին եւ Օծման: